ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2024/106

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 ապրիլի 2024 թ. N 106

ԱԲՈՎՅԱՆԻ ԲԱԶՄԱԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ

Գործունեության հասցեն՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Ուսանողական նրբ.4

Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2024թ.ապրիլի 27-ին քննարկեց Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջի (այսուհետ՝ Հաստատություն, ԱԲՊՔ, քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	10 հունվարի 2023թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում	17 հուլիսի 2023 թ.
փորձագիտական այցի իրականացում	18-21 սեպտեմբերի 2023 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	29 նոյեմբերի 2023 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	29 հունվարի 2024թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:
Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 4-ը՝ **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Հասարակական պատասխանատվություն» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** գնահատվել են անբավարար:
Հանձնաժողովը, ուսումնասիրելով Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. Առկա են որոշակի խնդիրներ որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, սակայն առկա են նաև առաջխաղացման միտումներ և օրինակներ

Բոլոր կրթական ծրագրերը համապատասխանում են ԱԲՊՔ առաքելությանը, համահունչ են տարածաշրջանի սոցիալ-տնտեսական կարիքներին և ՈԱԾ-ին,
ՄԿԾ-ները կազմված են պետական կրթական չափորոշիչների համաձայն, միտված են տարածաշրջանի աշխատաշուկայի կարիքների բավարարմանը: Ընդհանուր առմամբ ունեն ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդներ: Քայլեր են ձեռնարկվում ԱՀՈՒ ձևաչափի ներդրման ուղղությանբ: Քոլեջում սահմանված չեն գնահատման տարբերակված չափանիշներ:
ՄԿԾ կառավարման ոլորտում առկա են որոշ թերություններ ամբիոնի վարիչները թույլ վերահսկողություն ունեն մոդուլային/առարկայական ծրագրերի մշակման և իրականացման, ինչպես նաև պրակտիկաների ծրագրերի և կազմակերպման նկատմամբ: Ամբիոնների վարիչները չեն մասնակցում ՄԿԾ-ների ուսումնական պլանների մշակմանը:
ԱԲՊՔ-ի մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող դասախոսական կազմով, որոնց որակավորումը համապատասխանում է ներկայացվող պահանջներին: Առկա է քոլեջի ռազմավարական նպատակների իրագործմանը միտված ուսումնաօժանդակ կազմ:

ԱԲՊՔ-ում ձևավորված է բարենպաստ ուսումնական միջավայր: Վերջին տարիներին իրականացվել են շենքերի բարեկարգման և ռեսուրսների համալրման աշխատանքներ, որոնք կրում են շարունակական բնույթ: Իրականացվող ծախսերը միտված են քոլեջի հիմնական գործունեության՝ կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը: Ներքին շահակիցների համար առկա է անվտանգ և ապահով միջավայր:

2. Կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում է, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:

2020 թ. ՀՀ կառավարության որոշմամբ «Աբովյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը և «Աբովյանի թիվ 1 արհեստագործական ուսումնարան» ՊՈԱԿ-ը միավորվելով վերակազմակերպվել են որպես «Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջ»:

ԱԲՊՔ վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են բազմագործոնային քոլեջի առաքելությանը, իրականացվող մասնագիտությունները համահունչ են ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին: Քոլեջը զգայուն է աշխատաշուկայի կարիքներին և դրանց համապատասխան նոր մասնագիտություններ է ներդնում :

Ռազմավարական նպատակների իրականացման համար ԱԲՊՔ-ի մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները բավարար չեն: Քոլեջը չունի ռազմավարության իրականացման պլան ժամանակացույց, կարճաժամկետ պլանավորումն իրավիճակային է և չի բխում ռազմավարությունից: Քոլեջը չունի իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնաիրության կայուն մեխանիզմներ:

Ցածր է ներքին շահակիցների իրազեկվածությունը քոլեջի ռազմավարական նպատակներից և ընթացող գործընթացներից: Բացակայում են ռազմավարական նպատակների գնահատման և մշտադիտարկման մեխանիզմները:

ԱԲՊՔ-ում որակի ապահովման ներքին համակարգի վերաբերյալ դեռևս առկա չեն հստակ պատկերացումներ: Սահմանված չեն որակի ապահովման պատասխանատուի գործառույթները, տվյալների հավաքագրման, գործընթացների արդյունավետության գնահատման, վերլուծությունների, խնդիրների վերհանման մեխանիզմները բացակայում են: ՄԿԾ-ների որակի մասին հավաքագրվող քանակական և որակական տեղեկատվությունը ամբողջական չէ: Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված չեն որակի ապահովման գործընթացներում: ՊԻԳԲ շրջափուլը դեռևս ամբողջապես ներդրված չէ:

3. Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը բավարար չեն աջակցում որակավորորումների արժանահավատ շնորհմանը.

Քոլեջում գործում են ուսանողների ընդունելության կանոնակարգված գործընթաց: Վերջին տարվա ընթացքում գրանցվել է դիմորդների թվի աճ: Ուսանողների կարիքների վերհանման նպատակով կազմակերպվում և իրականացվում են տարատեսակ հանդիպումներ: Որոշ մասնագիտություններում ուսանողները կատարում են հետազոտական աշխատանքներ:

ԱԲՊՔ-ը չունի հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն, Հետազոտությունը քոլեջի ղեկավար և դասախոսական կազմի մեծ մասի կողմից դեռևս չի ընկալվում որպես դասավանդման և ուսումնառության գործընթացի բաղադրիչ մաս: Հետազոտական/ստեղծագործական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման առանձին տարրեր առկա են միայն արվեստի ոլորտի մասնագիտություններում դրանց առանձնահատկություններից ելնելով, սակայն քոլեջում առկա լավ փորձը դեռ չի հետազոտվում և չի տարածվում:

ԱԲՊՔ-ում շահակիցների նկատմամբ հաշվետվողականության մեխանիզմը լիարժեք չէ, հաշվետվությունները վերլուծական չեն: Քոլեջը բավականաչափ չի ապահովում գործընթացների թափանցիկությունը: Հասարակությանը մատուցվող ծառայությունները դեռ բարելավման կարիք ունեն՝ հատկապես գիտելիքի (արժեքների) տարածման ուղղությամբ: Քոլեջը ունի համագործակցությունների լայն շրջանակ, արտաքին հարուստ կապերի միջոցով նպաստում է քոլեջի

զարգացմանը, ուսանողների մասնագիտական աճին և առաջընթացին, դրա արդյունքում բարելվվել են ռեսուրսները:

4. Փորձագիտական զեկույցում նշված թերություններն առանցքային են որակավորորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, միաժամանակ հիմքեր ստեղծված են բարելավումների համար:

5. Թերությունների վերացման ծրագիրն իրատեսական է և իրականացման դեպքում կբերի որակական դրական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 /երկու/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Հասարակական պատասխանատվություն»»** և **«Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:
3. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման հստակ և չափելի որակական և քանակական ցուցիչներ ունենալու անհրաժեշտությանը,
   - նախապես հավաքագրված և վերլուծված տվյալների վրա հիմնված որոշումների կայացմանը,
   - դասախոսական կազմի դասավանդման արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմների կիրառմանը,
   - դասախոսական և ՈւՕ կազմերի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների վերանայմանը և նեղ պրակտիկ ոլորտի մասնագետների ներգրավմանը,
   - գործատու-գործընկերների հետ համագործակցությանը՝ նրանց ռեսուրսները համատեղ հետազոտական նպատակներով օգտագործելու համար,
   - հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցմանը, գործնական հմտությունների ձևավորրմանը,
   - ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը,
   - ներքին և արտաքին շահակիցների նկատմամբ հաշվետվողականության համակարգի բարելավմանը,
   - որակի մշակույթի ձևավորման և շարունակական զարգացմանը, քոլեջի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը:
4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 6 ամիսը մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել

իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով քոլեջի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:

5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2024 թ. ապրիլի 27
ք.Երևան